

Հարցաշար
Առարկայական օլիմպիադայի «Հայոց Եկեղեցու
պատմություն» առարկայի
մարզային փուլ
10-րդ դասարան - (120 րոպե)

№ 1- 8

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. Հայ Առաքելական բոլոր եկեղեցիներում Մեծ պահքի օրերին արգելվում է՝
1) Մկրտությունը *(0,5 միավոր)*
2) մատաղը
3) մոմավառությունը
4) խաչակնքումը

2. Ո՞ր լեռան ստորոտին էր գտնվում Գեթսեմանիի պարտեզը՝ *(0,5 միավոր)*
1) Թաբոր 2) Սիոն 3) Ջիթենյաց 4) Սինա

3. Թաղեոս առաքյալի նահատակությունից հետո որտե՞ղ են ճգնել սուրբ Ոսկյանք վկաները՝
(0,5 միավոր)
1) Ծաղկոտն լեռներ 2) Սեպուհ լեռ 3) Վարազա լեռ 4) Ծաղկավետ լեռներ

4. Ե՞րբ է վերացել Աղթամարի կաթողիկոսությունը՝ *(0,5 միավոր)*
1) 1446 թ. 2) 1918 թ. 3) 1915 թ. 4) 1895 թ.

5. Հայոց ո՞ր կաթողիկոսի օրոք է կազմվել «Գավառահայ հարստահարությունների բողոքագիրք»-ը՝ *(0,5 միավոր)*
1) Մկրտիչ Ա Խրիմյան 2) Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի
3) Մատթեոս Բ Կոստանդնուպոլսեցի 4) Գևորգ Ե Սուրենյանց

6. Ո՞ր Ավետարանից է մեջբերված հատվածը.
«Երանի հեզերին, որովհետև նրանք երկիրը պիտի ժառանգեն:
Երանի նրանց, որ քաղցն ու ծարավն ունեն արդարության, որովհետև նրանք պիտի
հագնանան:
Երանի ողորմածներին, որովհետև նրանք ողորմություն պիտի գտնեն.... »:
(0,5 միավոր)
1) Հովհաննեսի 2) Մարկոսի 3) Մատթեոսի 4) Ղուկասի

7. Հայոց ո՞ր հայրապետն է կաթողիկոսարանը Դվինից տեղափոխել Զվարթնոց:
(0,5 միավոր)
1) Զաքարիա Ա Չազեցի
2) Մաշտոց Ա Եղիվարդեցի
3) Գևորգ Բ Գառնեցի 4) Հովհաննես Ե Դրասխանակերտցի

8. Ո՞վ էր կարծում, որ բարոյական առաքինություններից ամենակատարյալը արդարությունն է:

(0,5 միավոր)

- 1) Սոկրատես 2) Պլատոն 3) Արիստոտել 4) Դավիթ Անհաղթ

№ 9 – 12

Կառուցված պատասխանով առաջադրանքներ

9. Ե՞րբ է Սյունյաց մետրոպոլիտությունը վերացել և կրկին դարձել սովորական եպիսկոպոսական թեմ.

(1 միավոր)

10. Ե՞րբ է կառուցվել Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց դպրատունը.

(1 միավոր)

11. 547 թ. առևտրականների անվան տակ Պարսկաստանից Հայաստան եկած նեստորականները ո՞ր վանքում են հաստատվում:

(1 միավոր)

12. Հայոց ո՞ր հայրապետի հովվապետության տարիների մասին է պատմիչը գրել, որ «Երկրում աճել ու բազմացել էին խաղաղությունը, պտղաբերությունը, առատությունը և գործի հաջողությունը և աստվածային մեծ պաշտամունքը.... »:

(1 միավոր)

№ 13 – 14

Համապատասխանեցում պահանջող առաջադրանքներ՝ յուրաքանչյուրը 4 փաստից

13. Հայոց կաթողիկոսի անունը համապատասխանեցնել հուղարկավորման վայրին:

(1 միավոր)

- 1) Ս. Էջմիածին
2) Թորոսան
3) Աշտիշատ
4) Թիլ

- ա) Ս. Գրիգոր Ա Լուսավորիչ
բ) Ս. Ներսես Ա Պարթև
գ) Ներսես Ե Աշտարակեցի
դ) Ս. Հովհաննես Գ Օձնեցի
ե) Ս. Սահակ Ա Պարթև

1	
2	
3	
4	

14. Հայոց կաթողիկոսների գահակալման տարեթվերը համապատասխանեցնել նրանց անուններին.

(1 միավոր)

- | | |
|---------------------------|----------------|
| 1) Ներսես Բ Բագրևանդցի | ա) 461–478 թթ. |
| 2) Հովսեփ Ա Հոռոցմեցի | բ) 478–490 թթ. |
| 3) Գյուտ Ա Արահեզացի | գ) 490–516 թթ. |
| 4) Հովհաննես Ա Մանդակունի | դ) 548–557 թթ. |
| | ե) 437–452 թթ. |

1	
2	
3	
4	

№ 15 – 17

Աշխատանք սկզբնաղբյուրով

15. «Պիտի տքնենք վերանորոգելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուններն են և հայ ճարտարապետության փառքի զմայլելի հուշարձանները»:

Հայոց ո՞ր կաթողիկոսի կոնդակից է մեջբերված հատվածը: **(1 միավոր)**

16. «Ազգը չգոհել կրոնին և կրոնը՝ ազգությանը»:

Հայ հոգևոր–մշակութային ո՞ր նշանավոր գործչի և իր աշակերտների հավատամքն էր վերը բերված ձևակերպումը: **(1 միավոր)**

17. « – Տեսնեմ, վեհափառ, ինչ է այդ թանկագին հնությունը:

– Իմ ազգս է, [....] Քրիստոսեն այ հին, Մովսեսեն այ, իմ թշվառ ազգը: Անտեսած այս թանկագին հնությունը՝ հին քար մը կամ առարկա մը փնտրելու կ'ելլեք»:

1) Ո՞ւմ հուշերից են մեջբերված խոսքերը: **(1 միավոր)**


2) Հայոց ո՞ր կաթողիկոսի մասին է մեջբերված հուշը: **(1 միավոր)**

№ 18 – 19

Տերմինների, հասկացությունների, պատճառահետևանքային կապերի, փաստերի իմացություն և խմբավորում պահանջող առաջադրանքներ՝ 2 ճիշտ պատասխանով

18. Թվարկված Հայոց կաթողիկոսներից ո՞ր երկուսը Հռոմկլայում չեն աթոռակալել:

- | | |
|----------------------------|---------------------------|
| 1) Ստեփանոս Դ Հռոմկլայեցի | (1 x 2 = 2 միավոր) |
| 2) Կոստանդին Ա Բարձրբերդցի | |






- 3) Գրիգոր Դ Տղա
- 4) Կոստանդին Գ Կեսարացի
- 5) Ներսես Դ Շնորհալի
- 6) Գրիգոր Բ Վկայասեր
- 7) Գրիգոր Զ Ապիրատ
- 8) Հովհաննես Զ Սսեցի

19. Նշել Կիլիկիայում հայկական թագավորության անկումից հետո հայոց կաթողիկոսական աթոռի վիճակը բնորոշող պնդումները. *(1 X 2 = 2 միավոր)*

- 1) Իրավիճակը կայունացավ և կաթողիկոսական աթոռը լիակատար վերահսկողություն սահմանեց ենթակա թեմերի նկատմամբ: Կիլիկիայում իրենց տիրապետությունը հաստատած մահմեդական տիրակալները հարկատվությունից ազատեցին կաթողիկոսական աթոռը:
- 2) Կիլիկիայում իրենց տիրապետությունը հաստատած մահմեդական տիրակալները հարկատվությունից ազատեցին կաթողիկոսական աթոռը, դադարեցին ներքին երկպառակությունները, և կաթողիկոսական աթոռը ամրապնդեց իր դիրքերն ու սկսեց հոգևոր-մշակութային ակտիվ գործունեություն ծավալել:
- 3) Սսի կաթողիկոսարանը վերականգնեց իր հեղինակությունը, դադարեցին ներքին երկպառակությունները, և կաթողիկոսական աթոռը կրկին դարձավ համազգային-եկեղեցական շահերն արտահայտող կառույց:
- 4) Ուժեղացան ներքին երկպառակությունները, տարբեր խմբավորումներ խարդավանքների, կաշառքի և թույնի միջոցով պայքար էին մղում կաթողիկոսական աթոռին տիրանալու համար: Կիլիկիայում մեկուսացած Սսի կաթողիկոսարանը հեղինակագրկվելով հետզհետե խորթանում էր բուն Հայաստանի բնակչությունից:
- 5) Հայոց եկեղեցու ներքին գործերին մահմեդական տիրակալների միջամտելու հետևանքով բազմաթիվ կաթողիկոսներ զոհ գնացին նրանց կամայականություններին և չարաշահումներին: Կիլիկիայում իրենց տիրապետությունը հաստատած մահմեդական տիրակալները ծանր հարկատվության ենթարկեցին կաթողիկոսական աթոռը:



№ 20
Շարադրանք (2 միավոր)

Ներկայացնել և գնահատել Վազգեն Ա Պալճյանի եկեղեցաշինական և հոգևոր-մշակութային գործունեությունը: